

**Մենդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացում**

N	Հարցեր	Պատասխաններ
1	2	3
1.	Ո՞վ է պատասխանատու նմուշառման համար ծառայությունների սերտիֆիկացման գործընթացում	1. Սերտիֆիկացման մարմնի փորձագետները 2. Փորձարկման լաբորատորիայի մասնագետները 3. Հայտատուն
2.	Ծառայության համապատասխանության հսկողությունն իրականացվում է	1. Ոչ պակաս , քան տարին մեկ անգամ 2. Ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ 3. Ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ
3.	Ծառայությունների սերտիֆիկացման աշխատանքները կատարվում են համաձայն	1. ՀՍ 5.9 ստանդարտի 2. ՀՍ 5.6 ստանդարտի 3. ՀՍ 5.7 ստանդարտի
4.	Ո՞րն է <i>պատրաստի սննդի տեղ հասցնելու ծառայությունների</i> ԱԳՏ կոդը	1. 55.52 2. 55.40.1 3. 55.30.12
5.	Ծառայությունների ո՞ր խմբին են դասվում <i>հանրային սննդի ծառայությունները</i>	1. Նյութական ծառայություն 2. Ոչ նյութական ծառայություն 3. Այլ ծառայություն
6.	Ո՞րն է 176-2005 ստանդարտի անվանումը	1. Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող պահանջներ 2. Հանրային սնունդ սպասարկող և արտադրական անձնակազմին ներկայացվող պահանջներ 3. Հանրային սնունդ, հանրային սննդի ծառայություններ, ընդհանուր պահանջներ
7.	Ծառայության համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը չպետք է գերազանցի	1. 3 տարին 2. 2 տարին 3. 1 տարին
8.	Հայտատուի կողմից ուղղիչ միջոցառումները չկատարելու դեպքում սերտիֆիկացման մարմինը	1. Դադարեցնում է սերտիֆիկատի գործողությունը 2. Կասեցնում է սերտիֆիկատի գործողությունը 3. Անվավեր է ճանաչում սերտիֆիկատի գործողությունը
9.	Իր ծառայությունը սերտիֆիկացնելու նպատակով հայտատուն հայտ է ներկայացնում	1. Իր կողմից ընտրված սերտիֆիկացման մարմին 2. ՀՀ որակի տեսչություն 3. Հավատարմագրման խորհուրդ
10.	Համապատասխանության հավաստման սերտիֆիկացման մարմինը կարող է իրականացնել սերտիֆիկացման աշխատանքներ	1. Իր հավատարմագրման ոլորտի շրջանակներում 2. Ցանկացած ոլորտում 3. Պարտադիր սերտիֆիկացման ցանկում ընդգրկված ոլորտում
11.	Ծառայությունների սերտիֆիկացման ժամանակ կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված	1. 8ս սխեման 2. 4ս սխեման 3. 2ս սխեման
12.	Ծառայությունների արդյունքի փորձարկումները կատարվում են	1. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում 2. Հայտատուի կողմից նշված լաբորատորիայում 3. Փորձարկումները չեն կատարվում
13.	Սերտիֆիկացման մարմինը հայտն ստանալուց հետո իրականացնում է անհրաժեշտ փաստաթղթերի փորձաքննություն	1. 10 օրյա ժամկետում 2. Նույն օրը 3. 5 օրվա ընթացքում
14.	Սերտիֆիկացման աշխատանքներն իրականացնելու համար փորձագետների խումբը ձևավորում է	1. Սերտիֆիկացման մարմնի ղեկավարը 2. Հայտատուն 3. Հավատարմագրման խորհուրդը (ՀՍ 5.9-2004)

1	2	3
15.	Հանրային սննդի ծառայությունների սերտիֆիկացումը պարտադիր է	1. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի համաձայն 2. ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով 3. Ազգային ստանդարտներով
16.	Սերտիֆիկացման աշխատանքների անհրաժեշտ վճարումները կատարում է հայտատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով	1. Անկախ սերտիֆիկացման արդյունքներից 2. Սերտիֆիկացման դրական արդյունքի դեպքում 3. Սերտիֆիկացման բացասական արդյունքի դեպքում
17.	Սերտիֆիկացման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում հայտատուն իրավունք ունի բողոքարկել	1. Սերտիֆիկացման մարմնի բողոքարկման հանձնաժողով 2. Ընտրել այլ փորձախումբ 3. Պահանջել վճարված գումարը
18.	Համապատասխանության սերտիֆիկատը հանձնվում է	1. 1 օրինակից 2. 2 օրինակից 3. 3 օրինակից
19.	Խոհարարական արտադրանքի նմուշառումը կատարվում է	1. ՍՑ 2657-82 2. Տեխնիկական կանոնակարգի համաձայն 3. ՉՕՍՍ 175-98
20.	Ծառայությունների սերտիֆիկացման մարմինը չի կարող զբաղվել	1. Հավատարմագրման ոլորտում ընդգրկված ծառայությունների մատուցմամբ 2. Ոլորտից դուրս ծառայությունների մատուցմամբ 3. Արտադրանքի պարտադիր համապատասխանության հավաստմամբ
21.	Ո՞րն է <i>ինքնապաստրկման կետերում սննդի ապահովման ծառայությունների</i> ԱԴԳՏ ծածկագիրը	1.55.30.12 2.55.30.13 3.55.30.14
22.	Ո՞րն է <i>ճաշարանների ծառայությունների</i> ԱԴԳՏ ծածկագիրը	1.55.40.10 2.55.30.11 3.55.51.10
23.	Խոհարարական կիսապատրաստվածքների անվտանգության ցուցանիշները սահմանված են	1.Տեխնիկական պայմաններով 2.Ազգային ստանդարտներով 3.Սան-Պիլ-ով
24.	Խոհարարական արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացները սահմանվում են	1.Տեխնիկական պայմաններով 2. Ստանդարտներով 3.Տեխնոլոգիական հրահանգներով
25.	Հանրային սննդի ծառայությունների սերտիֆիկացման ժամանակ պետք է իրականացվի	1.Վերահսկողություն 2.Ծառայության նույնականացում 3.Տեսչական հսկողություն
26.	Ո՞վ է վարում հայտատուներին տրված սերտիֆիկատների գրանցամատյանը	1.Սերտիֆիկացման մարմինը 2.Հայտատուն 3.Ազգային մարմինը
27.	Ու՞մ կողմից է իրականացվում սերտիֆիկացված հանրային սննդի ծառայությունների համապատասխանության հսկողությունը	1.Հայտատուի 2.Սերտիֆիկացման մարմնի փորձագետների 3.Ստուգումներ իրականացնող իրավասու մարմինների կողմից
28.	Ո՞րն է <i>խմիչքների ապահովման ծառայությունների</i> ԱԴԳՏ կոդը	1.55.30.11 2.55.40.10 3.55.51.10
29.	Ըստ «Սննդի ապահովման ծառայությունների և ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» ինչպե՞ս է բնութագրվում «ճաշարան» հասկացությունը	1.Սննդի ապահովման (հանրային սնունդ) կազմակերպության կառուցվածքային ենթաբաժին,որը նախատեսված է խմորեղենի, բուլկեղենի,գնովի ապրանքների և ոչ բարդ եղանակով պատրաստվող սահմանափակ տեսականու կերակրատեսակների իրացման համար:

		<p>2. Հանրամատչելի կամ սպառողների որոշակի քանակակազմին սպասարկող սննդի ապահովման (հանրային սնունդ) կազմակերպություն, որը պատրաստում և իրացնում է բազմազան կերակրատեսակներ՝ ճաշացուցակին համապատասխան:</p> <p>3. Սննդի ապահովման (հանրային սնունդ) կազմակերպություն ,որն ունի բարդ կերակրատեսակներ, այդ թվում՝ պատվիրված և ֆիրմային, ազգային, ինչպես նաև թունդ ակրոհոլային, թույլ ակրոհոլային և ոչ ակրոհոլային խմիչքների, ծխախոտի և հրուշակեղենի լայն տեսականի և հանգստի կազմակերպման հետ զուգորդված սպասարկման բարձր մակարդակ</p>
30.	Ի՞նչ է <i>ծառայությունը</i>	<p>1. Առնվազն մեկ գործողության արդյունք, որն իրականավում է կատարողի (մատակարարի) և սպառողի փոխգործակցությամբ և ,այն որպես, կանոն նյութական չէ:</p> <p>2. Ընդհանուր նպատակային և (կամ) գործառնական նշանակությամբ բնութագրվող գործողությունների համախումբ:</p> <p>3. Մեկ կամ մի քանի գործողությունների արդյունք, որը կատարվում է կողմերի միջև և այն նյութական է:</p>
31.	Համապատասխանության պարտադիր հավաստման դեպքում ի՞նչ նորմատիվ իրավական ակտերով է սահմանվում սերտիֆիկատի գործողության ժամկետը	<p>1. Տեխնիկական կանոնակարգով</p> <p>2. Սերտիֆիկացման մարմնի ղեկավարի հրամանով</p> <p>3. Տեխնոլոգիական հրահանգներով</p>
32.	Ծառայությունների սերտիֆիկացումն իրականացնում են	<p>1. Հավատարմագրված սերտիֆիկացման մարմինները</p> <p>2. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիաները</p> <p>3. Հավատարմագրման խորհուրդը</p>
33.	Հանրային սննդի ծառայությունների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի	<p>1. «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով</p> <p>2. «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով</p> <p>3. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով</p>
34.	Ու՞մ կողմից է սահմանվում ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեման	<p>1. Սերտիֆիկացման մարմնի ղեկավարի</p> <p>2. ՀՀ կառավարության</p> <p>3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության</p>
35.	Սահմանված պահանջներին ծառայության անհամապատասխանության դեպքում սերտիֆիկացման մարմինը զրավոր ծանուցում է	<p>1. Հավատարմագրման խորհրդին</p> <p>2. Ստուգումներ իրականացնող իրավասու մարմնին</p> <p>3. անհատ ձեռներեցներին</p>
36.	Ե՞րբ է ընդունվել սննդի ապահովման ծառայություններին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը	<p>1. 2005թվականի դեկտեմբերի 22-ին</p> <p>2. 2006թվականի դեկտեմբերի 22-ին</p> <p>3. 2004թվականի օգոստոսի 12-ին</p>
37.	Ո՞րն է <i>ՀՍ 5.9-2004</i> ստանդարտի անվանումը	<p>1. Հանրային սննդի ծառայություններ, ընդհանուր պահանջներ</p> <p>2. Համապատասխանության հավաստման համակարգ. Ծառայությունների սերտիֆիկացում</p> <p>3. Համապատասխանության հավաստման համակարգ. Արտադրանքի սերտիֆիկացում</p>

1	2	3
38.	Նշվածներից ո՞ր ծառայությունն է ենթակա համապատասխանության պարտադիր հավաստման	1.Հանրային սննդի ծառայություններ 2.Վարսավիրական ծառայություններ 3.Հյուրանոցային ծառայություններ
39.	Սերտիֆիկատը հանձնելու ժամանակ սերտիֆիկացման մարմինը հայտատուի հետ կնքում է պայմանագիր	1.Ծառայությունների սերտիֆիկացման աշխատանքների կատարման վերաբերյալ 2.Սերտիֆիկատի օգտագործման վերաբերյալ 3.Սերտիֆիկատը կասեցնելու վերաբերյալ
40.	Ծառայությունների համապատասխանության գնահատման մասնակիցներն են	1.ա) համապատասխանության գնահատման ազգային մարմինը բ) սերտիֆիկացման մարմինները գ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաները դ) հայտատուները (ծառայություն մատուցողները) 2. ա) համապատասխանության գնահատման ազգային մարմինը բ) հայտատուները (ծառայություն մատուցողները) 3. ա) սերտիֆիկացման մարմինները բ) հայտատուները գ) հասարակակն կազմակերպությունները
41.	ՀՀ տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ծառայությունները պետք է ուղեկցվեն	1.Համապատասխանության նշանի մակնշմամբ և սերտիֆիկատով 2. Համապատասխանության նշանի մակնշմամբ և զրանցված հայտարարագրով 3.Սերտիֆիկատով և հայտարարագրով
42.	Ո՞րն է սննդի ապահովման լրիվ ռեստորանային սպասարկմամբ ծառայությունների ԱԴԳՏ կոդը	1.55.30.11 2.55.40.10 3.55.51.10
43.	Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հանրային սննդի ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի	1.«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 2.«Համապատասխանության գնահատման մասին » ՀՀ օրենքով սահմանված կարգով 3.«Սերտիֆիկացման» մասին օրենքով սահմանված կարգով
44.	Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման պայմանները սահմանված են	1.ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով 2.Սերտիֆիկացման մարմնի ղեկավարի հրամանով 3.ՀՀ կառավարության որոշմամբ
45.	Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ծառայությունների ցանկը հաստատվում է	1.Ազգային մարմնի ղեկավարի կողմից 2. ՀՀ կառավարության կողմից 3.Հավատարմագրման խորհրդի նախագահի կողմից
46.	Փաստաթղթերի փորձաքննության բացասական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմինը որոշում է ընդունում	1.Ծառայության սերտիֆիկացումը մերժելու վերաբերյալ 2.Ծառայության սերտիֆիկացման վերաբերյալ 3.Սերտիֆիկատի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ
47.	Սերտիֆիկատը տնօրինողը որքա՞ն ժամանակում պետք է իրականացնի ուղղիչ միջոցառումներ	1.Մեկ ամսից ոչ ավել 2.Երկու ամսից ոչ ավել 3.Չորս ամսից ոչ ավել

1	2	3
48.	<p>Սննդի ապահովման ծառայություններին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը չի տարածվում</p>	<p>1.Երկաթուղային վագոն-ռեստորաններում և նավերում սննդի ապահովման ծառայությունների վրա  2.Առևտրական ավտոմատների միջոցով սննդի և խմիչքի վաճառքի, տեղում օգտագործելու համար չնախատեսված խմիչքների վաճառքի ծառայությունների վրա  3.Պատրաստի սննդի տեղ հասցնելու ծառայությունների վրա</p>
49.	<p>Հայտատուն իրեն հետաքրքրող ծառայության սերտիֆիկացման մասին տեղեկություն կարող է ստանալ</p>	<p>1.Համապատասխանության գնահատման ազգային մարմնից  2.Փորձարկման լաբորատորիայից  3.Տարբեր գրքերից</p>
50.	<p>Ո՞րն է սննդի ապահովման ծառայությունների ԱՂԳԴ կողմը</p>	<p>1.55.3  2.60.1  3.52.6</p>